ղող են մասնակցել և Վաղարշապատցիք և միւս գիւղացիները և եթէ վերջիններիս դրած գումարը կհասնի 10,000 ի, այն ժամանակ ընկերութիւնը իր վարչական մի խորհուրդը կունենայ և Վաղարշապատում ու նրան կյանձնուի անմիջական հսկողութիւնը գործերի վրայ։

Տ. Տեղակալը մի գրութեամբ դիմել է ձեռնարկողներին, որպէս զի պայմանները գրաւոր առաջարկեն Սինոդին ի քննութիւն և ի հաստատութիւն։

Մեր միաբանակից Տ. Սահակ վարդապետ Ամատունի երկար տարիների քրտնաթոր աշխատութեամբ պատրաստել է ժողովրդական բարբառների մի ընդարձակ բառարան։ Բաձրապատիւ հեղինակը ոչ միայն բացատրում է բառի նշանակութիւնը, յիշում այն բարբառները, որի մէջ գործ է ածւում բառը, այլ և օրինակներ է բերում գրականութիւնից և գրի առնուած բանահիւսութիւնից։ Բագուի Կուլտուրական Միութիւնը յանձն է առել տպագրել այդ բառարանը իւր հաշուով։ Հեղինակի ցանկութիւնն է, որ իւր գործը տպագրուի Մ. Աթոռի տպարանում, որպէս զի հնարաւորութիւն ունենայ այդ տաժանելի աշխատութեան մաքուր տպագրութեան և սրբագրութեան վերայ անձամբ հսկել։

Յունուարի տեսրակի մէջ հրատարակել էինք Կիլիկիոյ Ս. Կաթուղիկոսի կոնդակը, որով ցաւակցութիւն էր յայտնում ընդհանրական Հայրապետի մահուան առթիւ։ Ներկայ կոնդակով Ս. Կաթուղիկոսը համաձայնութիւն է յայտում Էջմիածնի ընդհանրական Հայրապետի ընտրութեան մասնակցելու՝ երկու աթոռների բարեկամական յարաբերութիւնը ամրապնդելու ցանկութեամբ լցուած։

Պատձէն.

Սահակ Ծառայ Յիսուսի Քրիստոսի և Անհասանելի կամաքն Աստուծոյ Եպիսկոպոսապետ և Կաթուղիկոս Ամե-

նայն Հայոց Մեծի Տանն Կիլիկիոյ, Ամենապատիւ Տ. Գէորգայ Արքեպիսկոպոսի Սուրբէնեան, Տեղակալի Սրբազնագոյն Կաթուղիկոսի ամենայն Հայոց, ողջոյն եղբայրական սիրոյ։ Ընկալաք զգրութիւն Կառավարչական մասին Սինոդի Ս. Էջմիածնի ի 10-ն դեկտեմբերի անցեալ ամի, ընդ համարաւ 2731, որով զեկուցանէր, եթէ ընդ այլ ծանուցողական հրովարտակ, առաքեալ է յանուն մեր և ի Դիւան փոխարքային Կովկասու յաղագս մահուան ի Տէր հանգուցեալ Ս. Կաթուղիկոսի և սահմանման ընտրութեան նոր Հայրապետի Ազգիս ։ 30 Հոկտեմբերի յառաջիկայ ամի։ Թէպէտ և չեն մեզ ծանօթ՝ նախորդք մեր մասնակցեալ են և ուրպէս ընտրութեան Տ. Տ. Մատթէոս, Գէորգայ, Մակարայ և Մկրտչի Կաթողիկոսաց ի Տէր հանգուցելոց, և թէ Սինոդ Սրբոյ Էջմիածնի առաքեալ է ըստ ժամանակին ծանուցողական հրովարտակս յանուն կաթողիկոսացն Կիլիկիոյ, մեք ի սրտէ գոհութիւն ունիմք, զի չեմք ի մոռացոնս, և ի լրումն վաղեմի բաղձանացս վասն բարւոք յարաբերութեան կրկին Աթոռոյ, Եթէ կամեսցի Տէր, և հանգամանք ժամանակին տայցեն թոյլ, առաքեցից ի մերմէ կողմանէ և ի վիճակաց Կիլիկիոյ փոխանորդս՝ ի մասնակցութիւն ընտրութեան ընդհ. Հայրապետի Ազգիս մերոյ սիրեցելւոյ, զոր ծանուցանելով եղբայրութեան Ձերում և Ձեօք Սրբոյ Սինոդին

Մնաւմ աղօթակից

ՍԱՀԱԿ Բ. ԿԱԹՈՒՂԻԿՈՍ Տ. ԿԻԼԻԿԻՈՑ։

ի 17-ն յունուարի 1908 ամի
և ըստ տոմարի ՌՃԾԷ
ի Հայրապետութեան Մերում Ե. ամի
յԱթոռ Կիլիկեան ի Սիս.
Թիւ 171.